



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍԻ**

Ա Ր Զ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 2/4

«18» մայիսի 2022 թվականի գ. Տեղ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԵՐԿՐՈՐԴ ՆՍԱՇՐՋԱՆԻ ՉՈՐՐՈՐԴ ՆԻՍԻ**

ՆԻՍԸ ԱՐԶԱՆԱԳՐՈՒՄ Է՝

Տեղի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Արտակ Բաղդազյույանը

ՆԻՍԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԵՆ՝

Տեղ համայնքի ավագանու թվով 13 (տասներեք) անդամներ՝

1. Ղուլունց Դավիթ Արամայիսի
2. Միրզոյան Արամ Գագիկի
3. Բաղդասարյան Նազիկ Մարատի
4. Միքայելյան Աննա Միքայելի
5. Սիմոնյան Լորա Ռաֆիկի
6. Առաքելյան Վահե Վարդանի
7. Դալլաքյան Արման Յուրիկի
8. Մարտիրոսյան Գևորգ Շիրազի
9. Դանիելյան Սևադա Վիտալիկի
10. Հովսեփյան Արգամ Ռադյայի
11. Հայրապետյան Հայրապետ Նորայրի
12. Զեյնալյան Մասիս Արամայիսի
13. Գալստյան Ասպետ Սաղաթելի

Բացակայում է Տեղ համայնքի ավագանու թվով 2 (երկու) անդամներ՝ Կարեն Բաղդասարյանը և Արագած Ղուկասյանը, որոնց գրանցման արդյունքների վերաբերյալ հայտարարությամբ հանդես եկավ Տեղի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Արտակ Բաղդազյույանը, ով միաժամանակ հայտարարեց, որ նիստին մասնակցում են ավագանու թվով 13 (տասներեք) անդամները:

ՆԻՍԻՆ ՀՐԱՎԻՐՎԱԾ ԵՆ՝

Համայնքի ղեկավարի խորհրդական Մարտունիկ Պողոսյանը, Քարաշենի վարչական ղեկավար Հակոբ Հակոբյանը, Արավուսի վարչական ղեկավար Արթուր Զհանգիրյանը, աշխատակազմի աշխատակիցներ և համայնքի բնակիչներ:

ԼՍԵՑԻՆ.

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 18-Ի ԵՐԿՐՈՐԴ ՆՍԱՇՐՋԱՆԻ ՉՈՐՐՈՐԴ ՆԻՍԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ և 64-րդ հոդվածներով՝ համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու 2022 թվականի մայիսի 18-ի 2-րդ նստաշրջանի 4-րդ նիստի օրակարգը.

1. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ) ստանալու նպատակով 2022 թվականի ծրագրային հայտ ներկայացնելուն համաձայնություն տալու մասին,
2. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 29-ի N 55-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին,
3. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու 2022 թվականի մարտի 10-ի N 16-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին,
4. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ղեկավարի 2022 թվականի մայիսի 11-ի «Տեղ համայնքի զարգացման հիմնադրամ հիմնադրելու մասին» N 70-Ա որոշումը հաստատելու մասին,
5. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու հերթական երկրորդ նստաշրջանի հինգերորդ նիստի գումարման օրը սահմանելու մասին:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

Կողմ – 11

դեմ – 1

ձեռնպահ – 1

Դեմ է քվեարկել Արգամ Հովսեփյանը, ձեռնպահ է քվեարկել Մասիս Զեյնալյանը:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ (ՍՈՒԲՎԵՆՑԻԱՆԵՐ) ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՀԱՅՏ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Դ. Ղուլունց)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ և 42-րդ կետերով, «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 4-րդ մասի բ) կետով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, Տեղ համայնքի ավագանին որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ) ստանալու նպատակով համաձայնություն տալ և թույլատրել ներկայացնելու հետևյալ ծրագրային հայտը՝

- 1) «Սյունիքի մարզի Տեղ համայնքի խաղահրապարակ-ժամանցի կենտրոնի վերակառուցում, վերանորոգում», համաձայն հավելվածի,